տեղ դիմաւորեցին և ողջունեցին Վեհափառ Հօրը Երեւանի թեմական Առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսը, Երեւանի ոստիկանապետը կազակ ձիաւորներով, քաղաքագլխի պաշտօնակատարը՝ քաղաքային խորհրդի երկու անդամներով, և Երեւան քաղաքի պատուաւոր անձինք. քայլ առ քայլ՝ աւելի և աւելի շատանում էր ժողովուրդը, գնացքը դանդաղանում էր, և Վեհափառի օրհնութեան կարօտ ամբոխը դիմում էին դէպի նորա կառքը։ Զանգի գետի վրայի կամրջին մօտ՝ կանգնած էին թուրք ազգաբնակութեան ներկայացուցիչները, իրանց առաջնորդ ունելով ոստիկանական աստիճանաւոր Սուլթանովին։ Ամբոխը այնչափ շատացաւ, որ երբ Վեհափառ տէրը մօտեցաւ սուրբ Սարգսի աւագ եկեղեցեոյն, կառքը ծանրաքայլ էր յառաջ գնում։ Հոգեւորականութիւնը խաչերով, խաչվառներով և երգեցիկներով կանգնած էր եկեղեցուն մօտ։ Վեհափառ տէրը ըստ սովորութեան կառքից դուրս գալուց յետոյ, սկսաւ հանդիսաւոր մուտքը դէպի եկեղեցին. Վեհափառ տէրը ամպհովանու տակ կանգնեց, որ բռնած ունէին Երեւանի չորս պատուաւոր քաղաքացիք։ Եկեղեցի մտնելու ժամանակ այնքան մեծ էր բազմութիւնը, որ ոստիկանութիւնը հազիւ էր կարողանում ճանապարհ բանալ. եկեղեցական պողոտայն կանաչով ու ծաղիկներով զարդարած էր. կարգ կարգ շարուած՝ մեր դպրոցների աշակերտները և աշակերտուհիները, որք սփռում էին Վեհափառի առաջ պատուական ծաղիկներից կազմած փնջեր. Վեհափառ Կաթուղիկոսը եկեղեցում պատշաճաւոր աղօթքը մատուցանելուց և երգեցողութեան ներկայ լինելուց յետոյ՝ դուրս եկաւ եկեղեցուց և Խաչը ձեռքին դիմեց դէպի Առաջնորդարան, ուր պատրաստած էր բնակարան Վեհափառի համար։ Առաջնորդարանում նորան սպասում էին Երեւանի նահանգապետ Շալիկովը՝ Երեւան քաղաքի այլեւայլ հաստատութեանց կառավարիչների և պարսից հիւպատոսի հետ (այն է Երեւանի գիմնազիայի վերատեսչի, ուսուցչական Սեմինարիայի վերատեսչի, ժանդարմի գլխաւորի, նահանգական դատարանի պրոկուրորի, ժանդարմի ադիւտանտի, բատալիոնի ադիւտանտի և տեղական յունադաւան եկեղեցու աւագ քահանայ Գամբարովի հետ)։ Առաջնորդարանի դրան շէմքում կանգնած էր նահանգապետի աւագ աստիճանաւոր